վարպետն իմ Տէր Յովանէս գնաց ի յիւր տեղն կանգնեցաւ. և օրս Տէր Մարկոսին առնել տվին զպատարագն, և երեկոյիս ի Սուրբ Նիկողոս գնացի:

Եւ օրս զզայմախաճն փոխեցին և եդին ի տեղի նորա զսիլիհտար թագաւորին, որ յառաջն էլեալ էր ի ներսէն եւ առեալ էր զԱմիթ, այժմ զայս եդին զայմախամ:

Եւ առաւօտուս կիրակի (11 Մայ-) ի Սուրբ Նիկողոս գնացի. և ճաշոյիս զվարդապետն բերին ի Ղալաթայու, եւ ի մեր ժամն գնացի եւ անտի գնացաք ի քով վարդապետին, և Մարտիրոս վարդապետն եկաւ անդ. և եկեալ արք և սպասաւորք էրիցու որդոյ Սէֆէր պաւուն և խնդրեալ զվարդապետն՝ առեալ տարան ի տուն, որ յայսմ գիշերի պաշտօն արար և մատաղ մեծ հերիսայիւ և բազում գառամբ և այլ կերակրովք և նստեցոյց զժողովուրդն ի տունն իւր, և տարան զվարդապետն և մեք ի հետն գնացաք, և աւրհնեաց զիւղ անուշն և զհերիսան խնկօք և մոմեղինօք, չարականօք և աւետարանիւ՝ ըստ խորհուրդին, և նստեալ կերաք. և յետ Գ և Դ ժամու, ետ աճմենեցուն զպաշտամանն. Ղալաթու և Գ եկեղեցոյս էրէց կային. և զվարդապետն անդ թողեալ՝ ես գնացի ի տուն գրել զգիր էջմիածնի Տէր Յովանէսին և անտի՝ ի Սուրբ Նիկողոս, և նստեալ անդ մինչև երիկուն հետ մեր աբեղայ Տէր Յոհաննէսին՝ եւեալ ի տուն գնացի: Եւ անդ որ նստեալ էաք՝ անձրև եկաւ բազում ևս առաւօտուս այլ եկաւ:

Առաւօտուս Բշի (12 Մայ-) գնացի ի մեր ժամն և անտի ի Մղտեսոնցն եւ էր անդ Գրիգորն Ղալաթու՝ այր Աստուածասէր, եւ անտի ի խանուէթ գնացի:

Օրս զԺԹ տարին լցի եւ ի Ի տարին մտայ. այլ այս չէ պարծանք թէ կու մեծանամք, այլ ա՛յն լիցի՝ որ բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնին զմիտս